«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2023

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ	Գնահատման սկզբունքները
ԱՌԱՐԿԱ	Պատմություն
ՀԵՂԻՆԱԿ	Շուշան Քալոյան
ՄԱՐԶ	Երևան
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ	Գ.Մահարու անվ. հ.176 հիմն. դպրոց

Բովանդակություն

Ներածություն 3

ԳԼՈՒԽ 1 4

ԳՆԱՀԱՏՈՒՄ 4

1.1 Գիտելիք: 4

1.2 Ընկալում: 4

1.3 Կիրառում: 5

1.4 Վերլուծում: 5

1.5 Համադրում: 6

1.6 Գնահատում կամ արժևորում: 6

ԳԼՈՒԽ 2 10

ԳԼՈՒԽ 3 12

ԳԼՈՒԽ 4 13

4.1 «ԹԵՍՏԵՐ»: 13

4.2 Թեստ կազմելու հիմնական սկզբունքները 15

4.3 Թեստերի բովանդակությունը 16

4.4 Թեստային առաջադրանքների տեսակները 17

Եզրակացություն 19

Գրականության ցանկ 20

Ներածություն

Հետազոտական աշխատանքի թեման այն է, որ արդյունավետ դաս կազմակերպելու համար բավարար չեն դասագրքերը և ուղեցույցները, և անընդհատ անհրաժեշտ է ինքնակրթվել ու զարգացնել առարկայի, մանկավարժության վերաբերյալ մեր գիտելիքները, հատկապես գնահատման գործընթացը, որը պետք է կազմակերպել արդյունավետ, հավաստիորեն և հիմնավորված:

Գնահատումը ունի կարևոր ազդեցություն մասնագիտության կրթական ծրագրի բարելավման, դասավանդման և ուսումնառության վրա:

Լավ գնահատականն ունի և՛ հիմնավորվածություն, և՛ հուսալիություն, գումարած որակի այլ հատկանիշներ, որոնք վերը նշված են որոշակի համատեքստում և նպատակով:

Որակի գնահատման գործընթացը արդյունավետ է , եթե.

– գնահատումը դիտարկվում է որպես ինքնազարգացման միջոց,
– գործընթացի գնահատումը պարունակում է իմաստ,
– գնահատումը ներառում է չափման սանդղակ և համապատասխան հիմքեր,
– գնահատումը օգտագործվում է որպես կառավարման գործիք,
– արդյունքների գնահատումը արդյունավետ է և օգտագործվում է ծրագրերի և գործընթացների բարելավման համար:

Որակի գնահատման պլանը կազմելիս անհրաժեշտ է հստակեցնել գնահատման ուղղվածությունը և նպատակը:

ԳԼՈՒԽ 1
ԳՆԱՀԱՏՈՒՄ

Սովորողների առաջադիմության, նրանց ձեռք բերած գիտելիքների, կարողությունների, հմտությունների գնահատման համակարգն առավել ամբողջական, տեսանելի և կիրառելի դարձնելու նպատակով առաջարկվում է հետևել ամերիկացի նշանավոր հոգեբան և մանկավարժ Բենջամին Բլումի դասակարգմանը:

Բենջամին Բլումը իմացական ոլորտում առանձնացնում է 6 բաղկացուցիչ կամ աստիճան՝ ***գիտելիք, ըմբռնում, կիրառում, վերլուծում, համադրում, արժևորում*** կամ ***գնահատում***:

1.1 Գիտելիք:

Սովորողն ուսումնառության ընթացքում ձեռք է բերում որոշակի ընդհանուր և հիմնարար հասկացություններ, փաստեր հայոց լեզվից, գրականությունից, գրականագիտությունից: Նշյալ ոլորտներից ձեռք բերած գիտելիքների հիման վրա նա կարողանում է ճանաչել, սահմանել, նկարագրել, պարզել, թվարկել, համապատասխանեցնել, անվանել, ուրվագծել, վերարտադրել, ընտրել, պնդել: Եթե ուսուցիչը նպատակ ունի ճշտելու սովորողի ձեռք բերած գիտելիքի սահմանը, ապա պիտի կազմի այնպիսի առաջադրանքներ, որտեղ պահանջվում է պատմել, թվարկել, տեղավորել, գրել, գտնել, հայտնել, անվանել, սահմանել:

Օրինակ՝ տրվում է տեքստ՝ որոշակի բառերում բաց թողնված տառերով, աշակերտը պիտի գտնի և տեղադրի տվյալ ուղղագրական կանոնին վերաբերող համապատասխան տառերը: Կամ տրված բառախմբից գտնի գործողություն ցույց տվող բառերը և այլն:

1.2 Ընկալում:

Աշակերտը հասկանում, մեկնաբանում է փաստերը և սկզբունքները, տեքստը, բանավոր նյութը, աղյուսակները, գծապատկերները, հիմնավորում է տվյալ քերականական կանոնի առկայությունը: Այս աստիճանում սովորողը կարողանում է պաշտպանել իր տեսակետը, տարբերակել, բացատրել, օրինակներ բերել, վերաձևակերպել, ամփոփել: Գիտելիքի ըմբռնումը կամ ընկալումը ստուգելու նպատակով ուսուցիչը պիտի կազմի առաջադրանքներ, որտեղ պահանջվում է բացատրել, մեկնաբանել կարդացած տեքստը, ուրվագծել դեպքերի, գործողությունների զարգացման ընթացքը, ինքնուրույն քննարկել տվյալ երևույթը

կամ քերականական կանոնը, տարբերակել, վերաշարադրել և կարդացածը վերարտադրել աղյուսակների, գծապատկերի, գույների, նկարազարդման, երաժշտության միջոցով:

Օրինակ՝ գրական երկի ընթերցումից հետո աշակերտին առաջարկվում է դրան համապատասխան նկարազարդում անել, գույներ կամ երաժշտություն ընտրել: Կամ էլ քերականական որևէ կանոնի վերաբերող աղյուսակներն ու գծապատկերները մեկնաբանել և բացատրել:

1.3 Կիրառում:

Սովորողը ձեռք բերած գիտելիքը, քերականական օրենքներն ու տեսությունները կիրառում է գործնականում կամ նոր իրավիճակում, լուծում է տրամաբանական խնդիրներ, կառուցում է աղյուսակներ և գծապատկերներ: Նա կարողանում է կատարել հետևյալ գործողությունները՝ կիրառել, ցուցադրել, բացահայտել, փոխել, ձևափոխել, լուծել, կանխատեսել դեպքերի, գործողությունների զարգացման ընթացքը: Գիտելիքի կիրառման կարողությունը ստուգելու նպատակով ուսուցիչը կազմում է առաջադրանքներ՝ լուծելու, ցույց տալու, կիրառելու, ձևավորելու, հաշվելու, դասակարգելու, ավարտելու պահանջներով:

Օրինակ՝ աշակերտն ինքն է տվյալ ուղղագրական կանոնին ենթարկվող բառերը դասդասում համապատասխան գծապատկերների և աղյուսակների ձևով, տրված արմատների միացումով բառեր է կազմում, ավարտում է տրված նախադասությունը կամ տեքստը և այլն:

1.4 Վերլուծում:

Աշակերտը կարողանում է գտնել տեքստում կամ կանոնի, սահմանման մեջ առկա տրամաբանական սխալները, տարբերել փաստը կարծիքից, հիմնավորել փաստի համապատասխանությունը կանոնին: Սովորողը կարողանում է համեմատելով և վերլուծելով պատկերել, ուրվագծել, բաժանել, առանձնացնել, տարրալուծել, ընտրել, տարբերակել, բխեցնել: Ուսուցիչը կազմում է առաջադրանքներ և պահանջ է դնում ճշտելու, դասակարգելու, վերլուծելու, համեմատելու, հակադրելու, քննելու, բացատրելու, գովազդեու:

Օրինակ՝ ընդգծված բառերի փոխարեն սովորողն ընտրում է համապատասխան հոմանիշն ու հականիշը: Կամ էլ տրված տեքստում, նախադասության մեջ գտնում է բառի սխալ գործածության, շարահյուսական անհարթության դեպքերը և այլն:

1.5 Համադրում:

Այս մակարդակում աշակերտն ունի կանոնավոր և համակարգված բանավոր և գրավոր խոսք, կարողանում է ստեղծագործել, մշակում է գործողությունների պլան, տրված առաջադրանքը կատարելու համար կարողանում է համադրել տարբեր առարկաներից ունեցած գիտելիքները, գծապատկերներ և աղյուսակներ ինքնուրույն է կազմում, ինչպես նաև մեկնաբանում է դրանք: Սովորողը կարողանում է կատարել հետևյալ գործողությունները՝ համադրել, ստեղծել, բացատրել, ապացուցել, պլանավորել, վերակառուցել, ամփոփել, նորովի շարադրել: Ուսուցիչը կազմում է առաջադրանքներ, որտեղ սովորողից պահանջվում է հայտնաբերել, ապացուցել, շարադրել, կանխատեսել, պլանավորել, կառուցել, նախագծել, պատկերացնել, բարելավել, ձևակերպել, հորինել:

Օրինակ՝ երբ ուսուցիչն առաջարկում է համեմատել գրական տարբեր ժանրի ստեղծագործություններ, գտնել դրանց տարբերիչ և ընդհանրական գծերը: Կամ աշակերտը ինքնուրույն փորձում է ապացուցել, որ տրվածը գրական այս կամ այն ժանրի ստեղծագործություն է: Այս հարցում շատ կարևոր է, որ սովորողը կիրառի լեզվական ամենաբազմազան միջոցներ: [1]

1.6 Գնահատում կամ արժևորում:

Այս փուլում աշակերտը դատողություններ է անում գրական-գեղարվեստական, հանրամատչելի տեքստերի, երաժշտական և արվեստի այլ ճյուղերի ստեղծագործությունների մասին՝ առաջնորդվելով ինչպես սեփական, այնպես էլ համընդհանուր չափանիշներով: Սովորողը կարողանում է կատարել հետևյալ գործողությունները՝ համեմատել, հակադրել, քննադատել, նկարագրել, բացատրել, մեկնաբանել, հիմնավորել, եզրակացնել, ամփոփել, գնահատական տալ: Ուսուցիչը պիտի կազմի այնպիսի առաջադրանքներ, որտեղ սովորողից

[1] . Խոսքի մշակույթ: Դասագիրք բուհերի հումանիտար և բնագիտական ֆակուլտետների ուսանողների համար:

կպահանջվի ճշգրտել, դատել, հիմնավորել, փաստարկել, կարծիք հայտնել, բանավիճել, քննարկել, գնահատել:

Իմացական ոլորտի բաղադրիչները	Աշակերտը կարողանում է	Ուսուցիչը կազմում է առաջադրանքներ
Գիտելիք Սովորողը ձեռք է բերում որոշակի, ընդհանուր և հիմնարար հասկացություններ, փաստեր հայոց լեզվից, գրականությունից և գրականագիտությունից:	Ճանաչել, սահմանել, նկարագրել, պարզել, թվարկել, համապատասխանեցնել, ան վանել, վերարտադրել, ընտրել, պնդել:	Պատմել, թվարկել, նկարագրել, տեղադրել, լրացնել, գրել, գտնել, հայտնել, անվանել:
Ընկալում Սովորողը հասկանում և մեկնաբանում է փաստերը, տեքստը, բանավոր նյութը, աղյուսակները, գծապատկերները, հիմնավորում է տվյալ իրողության առկայությունը:	Պաշտպանել իր տեսակետը, բացատրել, օրինակներ բերել, վերաձևակերպել, հետևություններ անել, ամփոփել:	Բացատրել, մեկնաբանել, վերաշարադրել, նկարագրել, ուրվագծել, քննարկել, տարբերակել:
Կիրառում Սովորողն իմացածը կիրառում է նոր իրավիճակում, քերականական օրենքներն ու տեսությունները կիրառում է գործնականում, լուծում է տրամաբանական խնդիրներ, կազմում է աղյուսակ և գծապատկեր:	Կիրառել, փոփոխել, ձևափոխել, ցուցադրել, բացահայտել, կանխատեսել, լուծել:	Կիրառել, լուծել, ցույց տալ, ձևավորել, հաշվել, կազմել, դասակարգել, ավարտել, ամբողջացնել:

Վերլուծում Սովորողը կարողանում է գտնել տեքստում կամ կանոնի, սահմանման մեջ առկա տրամաբանական սխալները, տարբերել փաստը կարծիքից, հիմնավորել փաստի համապատասխանությունը կանոնին:	Բաժանել, ընտրել, առանձնացնել, տարրալուծել, տարբերակել, ուրվագծել, պատկերել, բխեցնել:	Տարբերակել, ճշտել, դասակարգել, առանձնացնել, համեմատել, հակադրել,վերլուծել, քննել, բացատրել, գովազդել:
Համադրում Սովորողն ունի համակարգված բանավոր և գրավոր խոսք, կարողանում է ստեղծագործել, մշակում է գործողությունների պլան, տրված առաջադրանքը կատարելիս համադրում է տարբեր առարկաներից ձեռք բերած գիտելիքները, ինքնուրույնաբար կազմում, մեկնաբանում է աղյուսակները և գծապատկերները:	Համադրել, բացատրել, ապացուցել, պլանավորել, ամփոփել, ստեղծել, նորովի շարադրել:	Համեմատել, հայտնաբերել, կանխատեսել, պլանավորել, նախագծել, պատկերացնել, բարելավել, ձևակերպել, ապացուցել, ստեղծել, հորինել, շարադրել:
Գնահատում, արժևորում Սովորողը դատողություններ է անում գրական-գեղարվեստական, գիտական և հանրամատչելի տեքստերի և ստեղծագործությունների մասին՝ առաջնորդվելով ինչպես սեփական, այնպես էլ	Տրամաբանել, մեկնաբանել, եզրակացնել, հակադրել, քննադատել, հիմնավորել, ամփոփել, գնահատական տալ, բանավիճել:	Հիմնավորել, փաստարկել, բացատրել, դատել, քննարկել, ճշգրտել, գնահատել, կարծիք հայտնել, եզրահանգումներ անել:

համընդհանուր չափանիշ-ներով:		

Բենջամին Բլումի դասակարգման վերջին երեք ոլորտին են վերաբերում այնպիսի առաջադրանքները, որոնք պահանջում են մտածողության բարձրակարգ որակների դրսևորում: Օրինակ, երբ սովորողից պահանջվում է նոր վերնագիր ընտրել, տեքստը հատվածների բաժանել և հարցեր մշակել կամ վերնագրել դրանք, պատմության համար սկիզբ կամ շարունակություն հորինել, նոր հերոս ավելացնել և շարունակել պատմությունը, երկու գրական երկեր համեմատել և որոշակի եզրահանգման գալ, տվյալ գրական ժանրի առկայությունն ապացուցել և այլ կարգի առաջադրանքներ:

ԳԼՈՒԽ 2

Գնահատման իրականացման հաջորդական քայլերը

Աշակերտների գիտելիքների, կարողությունների ստուգման, դրանց ձևավորման կամ ուսումնական նպատակով կարող են հանձնարարվել, ինչպես ավանդական՝ այժմ դպրոցներում կիրառվող, այնպես էլ ժամանակակից մեթոդներ և միջոցներ: Թե՛ ամփոփիչ, թե՛ ձևավորող գնահատումը կարելի է իրականացնել հետևյալ հաջորդական քայլերով՝

1. Ստուգման և գնահատման նպատակը. ուսուցիչը անպայման պիտի հստակ իմանա, թե ի՛նչ նպատակով է տրվում տվյալ աշխատանքը: Ի՞նչն է ուզում ստուգել՝ գիտելիքի սահմանը, դրա ընկալումը, այդ գիտելիքի գործնական կիրառությունը, մտածողության և տրամաբանության դրսևորումը, այսինքն՝ վերլուծելու և համադրելու կարողությունը, խոսք կազմելու և հորինելու, այսինքն՝ երևակայություն և ստեղծագործական կարողությունների բացահայտումը: Ուսումնառության արդյունքների գնահատումը նպատակ ունի որոշելու սովորողի մոտ կարողունակության զարգացման աստիճանը ըստ ուսումնական առարկաների չափորոշչով սահմանված վերջնարդյունքներին համապատասխան ձեռք բերած գիտելիքների և հմտությունների մակարդակի, ինչպես նաև դիրքորոշումների ու արժեքների ձևավորման:[2]

Անհրաժեշտ է ճշտել նաև տրվելիք առաջադրանքի ձևավորող կամ ստուգողական նպատակադրումը, քանի որ դրանք բովանդակության առումով տարբեր են: Ուսուցողական նպատակով տրվող առաջադրանքը, այսինքն՝ ձևավորող գնահատումը, թեմայի ուսուցման շարունակությունն է, ուսումնական գործընթացի անբաժանելի մասն է կազմում և ուսուցչին օգնում է տվյալ թեմայի ուսումնասիրության ընթացքում:

2. Թեմայի ընտրությունը բխում է առարկայական չափորոշչից և ծրագրերից և ուսուցչի թեմատիկ պլանավորումից: Եթե ուսուցիչը ուզում է տեսնել, թե որքանով է աշակերտը պատրաստ և ունակ կարդացածի վերլուծության կամ դրա ընկալման, ստուգման նպատակով կարող է տալ տեքստային և բառային առաջադրանքներ, հայոց լեզվից և գրականությունից անցածի ընթացիկ ստուգում կամ գործնական գրությունների ինքնուրույն կազմում:

[2] . https://www.arlis.am/documentview.aspx?docid=149788

3. Առաջադրանքների բովանդակությունը: Ուսուցիչը կազմում է իր հանձնարարելիք առաջադրանքների նմուշները, հարցարանային և թեստային առաջադրանքներով թերթիկները, նախօրոք պլանավորում է նաև աշխատանքի անցկացման մեթոդները:

4. Շերտավորված կամ անհատական մոտեցում: Ուսուցիչը մտածում է նաև աշակերտական համակազմի ընդունակությունների և կարողությունների մասին. արդյոք բոլո՞ր սովորողներն են ի վիճակի կատարելու իր կազմած առաջադրանքները: Այս դեպքում նա կարող է անհատական առաջադրանքներ տալ՝ ամեն աշակերտի ունակությունների հաշվարկումով: Շերտավորված մոտեցումը կարելի է իրականացնել նաև նույն թեստի կամ հարցարանի շրջանակում. այս դեպքում թեստային և հարցարանային առաջադրանքները կբարդանան աստիճանաբար:

5. Գնահատում: Ուսուցիչը որոշակի արժեք է տալիս իր կազմած առաջադրանքներին, այսինքն՝ մշակում է տվյալ առաջադրանքի գնահատման սանդղակը՝ ըստ գնահատման 10-միավորանոց համակարգի: Եթե առաջադրանքը ուսուցանող նպատակադրում ունի, ապա ուսուցիչը միավորներով չի գնահատում, այլ բավարարվում է կամ սխալները միայն նշելով կամ նկարագրական բնույթի գնահատական տալով: Քանակական գնահատման համար կիրառվում է 10-միավորային սանդղակ, որտեղ որեւէ թիվ անվաբարար գնահատական չի համարվում, եւ յուրաքանչյուր նիշ նկարագրում է աշակերտի հաջողության որևէ մակարդակ:[3]

6. Կազմած առաջադրանքի որակի ստուգում կամ հետադարձ կապ: Ուսուցչի վերջին քայլն է: Ստուգողական կամ թեմատիկ աշխատանքի արդյունավետությունը նա կարող է կանխատեսել նաև նմանօրինակ ուսուցողական առաջադրանք տալով կամ էլ ստուգողական աշխատանքի արդյունքների վերլուծությունից հետո որոշակի ճշգրտումներ կատարելով իր կազմած նյութի, թեստային և հարցարանային առաջադրանքների մեջ:

Ձևավորող գնահատումն ապահովում է սովորողի՝ տվյալ պահի անհատական ուսումնական ձեռքբերումների համեմատությունը նրա նախկին ձեռքբերումների հետ:[4]

[3] . https://lib.armedu.am/files/resource/files/2022-07-11/2b2703c1568910a9c680b2ab7a6e30a5.pdf

[4]. Հովհաննիսյան Սմբատ Հայոց պատմու թյուն: Մեթոդական ուղեցույց: 7-րդ դասարան / Ս. Հովհաննիսյան.- Եր.: «Մասնակցային դպրոց» ԿՀ, 2023.

ԳԼՈՒԽ 3
Ուսուցողական նպատակով տրվող առաջադրանքներ կամ ձևավորող գնահատում

Ձևավորող կամ ուսուցանող առաջադրանքները դասավանդման կարևոր փուլն են. թեմայի ուսումնասիրության ընթացքում օգնում են աշակերտին՝ յուրացնելու նյութը, ուսուցչին էլ տեղեկություններ են հաղորդում աշակերտի գիտելիքների և կարողությունների ձևավորման ընթացքում թույլ տված վրիպումների մասին: Այդ իսկ պատճառով էլ ուսումնական նպատակ հետապնդող թեստերին, հարցարաններին, ստեղծագործական աշխատանքներին և առաջադրանքներին թվանշային կամ միավորային գնահատական չի տրվում: Ուսուցողական առաջադրանքները թեմատիկներից տարբերվում են քանակական առումով. ուսուցանող առաջադրանքները տատանվում են 1-5 հարցերի կամ հարցադրումների սահմանում, բայց բացահայտում են տվյալ թեման գրեթե ամբողջությամբ, իր տարբեր դրսևորումներով: Նույն կերպ ուսուցանող թելադրությունը փոքրածավալ է, բայց հագեցած է տվյալ ուղղագրական կանոնին վերաբերող գրեթե բոլոր դրսևորումներով:

Ուսուցանող աշխատանք կատարելիս աշակերտը կարող է ճշգրտող հարցերով դիմել թե՛ իր դասընկերոջը, թե՛ ուսուցչին: Կլինեն նաև առաջադրանքներ, որոնց կատարումը կհանձնարարվի որոշակի խմբի: Այսպիսի առաջադրանքները տրվում են որևէ նյութի ուսուցման ընթացքում, հաջորդում են նոր թեմայի բացատրությանը կամ էլ անցկացվում են դրա ամփոփման ժամանակ:

Ձևավորող գնահատման կամ ուսուցման նպատակով կարող են տրվել ստեղծագործական լուծումներ, տրամաբանություն և երևակայություն պահանջող զանազան (բաց) հարցեր և առաջադրանքներ:

Ուսուցողական կամ ձևավորող առաջադրանքներ կամ այլ տեսակի գրավոր աշխատանքներ կատարելու ընթացքում ուսուցիչը պիտի կանխի ուղղագրական, կետադրական և ոճական բնույթի սխալները: Այսինքն՝ ուսուցիչն իր աշխատանքն այնպես պիտի պլանավորի և կազմակերպի, որ ապահովվի անհատական մոտեցումը, հանգամանալից աշխատանքը յուրաքանչյուր աշակերտի հետ:

ԳԼՈՒԽ 4
Թեստային առաջադրանքներ

4.1 «ԹԵՍՏԵՐ»:

Թեստը ի հայտ է եկել 20-րդ դարասկզբին և կիրառվել է հոգեբանության, սոցիոլոգիայի և մանկավարժության ոլորտներում: Այն որոշակի հոգեբանական կամ սոցիոլոգիական հետազոտություններ կատարելուն է ծառայել: Ավելի ուշ ամերիկացի մանկավարժներն սկսեցին թեստը կիրառել որպես սովորողների ձեռք բերած գիտելիքների, դրանց ընկալման և կիրառության ստուգման ձև:

Թեստ բառը անգլերենում նշանակում է փորձարկում կամ ստուգում: Թեստը տարբերվում է այլ կարգի ուսուցանող կամ ստուգման նպատակով հանձնարարվող առաջադրանքներից, հարցաշարերից, դասագրքային հարցադրումներից:

Եթե բնորոշելու լինենք թեստը, ապա դրան հատուկ են՝

1. համակարգվածությունը. ընդգրկված առաջադրանքները միայն միևնույն առարկայի շուրջ են, նույնիսկ միևնույն թեմայի շրջանակն են ընդգրկում և կազմված են պարզից բարդ աստիճանական զարգացումով.
2. հատուկ ձև. թեստը հարցերի կամ խնդիրների հավաքածու չէ. առաջադրանքը հիմնականում ձևակերպվում է որպես ճիշտ կամ սխալ արտահայտություն, որը պատասխանով է պայմանավորված.
3. առաջադրանքի տրամաբանական որոշակիություն. սա նշանակում է, որ թեստային առաջադրանքը երկվության կամ կասկածի առիթ չպետք է տա, այն ունի որոշակի դրական կամ բացասական պատասխան.
4. թեստի առաջադրանքի պատասխանը հակիրճ դատողություն է. ընդ որում այդ ճիշտ պատասխանը նա ընտրում է արդեն տրվածներից: Սա թեստի կարևոր հատկանիշներից մեկն է. պատասխանը արդեն կա, հարցվողը պիտի ընտրի տրվածներից:
5. ունի հատուկ կառուցվածք. թեստային առաջադրանքների միջև գոյություն ունի հաջորդական կապ. ամեն առաջադրանք բխում է նախորդից և զարգացնում է արծարծվող թեման:
6. հաջողությունը պայմանավորված է փորձարկումով. թեստային առաջադրանքի մյուս շատ կարևոր առանձնահատկությունն այն է, որ միայն որոշակի փորձարկումից հետո կարելի է վստահորեն թեստը հաջողված համարել:

Իմիջայլոց, պետք է նկատել, որ թեստով ստուգված գիտելիքի շրջանակն ավելի նեղ է, քան առարկայական չափորոշչով և ծրագրով նախատեսվածը: Այդ է պատճառը, որ ամեն թեմա չէ, որի յուրացումը կարելի է ստուգել թեստային առաջադրանքներով: Հատկապես երկարաշունչ բացատրություններ պահանջող նյութը չի կարող թեստային առաջադրանք դառնալ: Թեստային առաջադրանքներ չեն նաև ինքնուրույն ստեղծագործական, գրական երկի ըմբռնման գեղագիտական մեկնաբանությունները, այսինքն՝ անհատական տեսակետի կամ կարծիքի շարադրանքները: Բացի դրանից՝ ուսումնական գործընթացում սովորողի գիտելիքի, կարողությունների և հմտությունների մասին միայն թեստի արդյունքներով դատելը ճիշտ չէ: Այդ է պատճառը, որ թեստային ստուգումները պիտի շատ հանգամանալից նախապատրաստվեն և փորձարկվեն, ինչպես նաև աշակերտների առաջադիմության գնահատման գործընթացում միայն թեստային առաջադրանքների արդյունքներով պետք չէ բավարարվել կամ դրանցով ավարտուն պատկերացում կազմել սովորողի ձեռքբերումների, կարողությունների և հմտությունների մասին: Թեստ կազմելիս առանձնահատուկ կարևորություն ունի առարկայի խոր իմացությունը, բառընտրությունը, ձևակերպման ճշգրտությունը և հստակությունը:[5]

Թեստը կիրառվում է որպես գնահատման արագ, արդյունավետ, անաչառ մի ձև, որը հարմար է կարճ ժամանակահատվածում շատ մարդկանց ստուգելու և գնահատելու համար: Դրա դերը հատկապես մեծանում է համակարգչով ինքնաստուգում և ինքնավերահսկողություն իրականացնելու ժամանակ:

Ըստ նպատակադրման թեստերը կարող են լինել՝

1.*Ընդհանուր գիտելիքի ստուգման թեստեր*, որոնք ընդհանրական բնույթ են կրում և կարող են ներառել մի քանի տարվա ընթացքում ուսուցանված նյութ: Այդպիսին են կրթարանների ավարտական և բուհերի ընդունելության համար կազմված թեստերը:

2.*Առաջադիմության ստուգման թեստեր*, որոնք կիսամյակի, ուսումնական տարվա կամ յուրաքանչյուր թեմայի ուսուցման ավարտին են տրվում, որպեսզի ստուգեն տվյալ նյութի յուրացման մակարդակը և աստիճանը:

---

[5] . Խոսքի մշակույթ: Դասագիրք բուհերի հումանիտար և բնագիտական ֆակուլտետների ուսանողների համար:

3.*Հայտորոշիչ կամ ախտորոշիչ* թեստեր, որոնք պարբերաբար տրվում են սովորողների ուժեղ և թույլ կողմերը բացահայտելու, հետագայում ուսումնական գործընթացում որոշակի բարեփոխումներ կատարելու նպատակով:

4.Սովորողի *ուսումնառության տեղը որոշելու* նպատակով տրվող թեստեր, որոնք բացահայտում են տվյալ առարկայից սովորողի ունեցած պաշարը: Այդպիսի թեստեր սովորաբար կիրառվում են սովորողներին խմբերի բաժանելու, ուսուցման համապատասխան ծրագիրը ճշտելու համար:

Առաջին տեսակի թեստեր ստեղծվում են դպրոցից կամ կրթարանից դուրս նախարարության կազմած հատուկ հանձնաժողովի ուժերով: Մնացած երեք տեսակները կազմվում են դպրոցում մանկավարժական համակազմի ընդհանուր ջանքերով: Այդ թեստերը մշտապես թարմացվում և նորացվում են, որը պայմանավորված է փորձարկման արդյունքներով և գիտության, կրթության բնագավառում ի հայտ եկող նորարարություններով:

4.2 Թեստ կազմելու հիմնական սկզբունքները

Թեստ կազմելու հիմնական սկզբունքներն են՝ հավաստիությունը կամ վավերականությունը, հուսալիությունը և անաչառությունը:

Թեստի *հավաստիությունը* կամ *վավերականությունը* ընտրված առաջադրանքների բովանդակության և հարցվողի անհատական որակների համապատասխանությունն է: Այսինքն՝ առաջադրանքները համապատասխանում են սովորողի տարիքային առանձնահատկություններին, նրա իմացական մակարդակին, ընդունակություններին: Եթե ուսուցիչը որոշել է ստուգել տվյալ քերականական կանոնի ընկալումը, ապա նա միայն դա պիտի ստուգի և դրան համապատասխան առաջադրանքներ կազմի: Առաջադրանքների և հարցադրումների տեսակները և դրանց բովանդակությունը աշակերտին արդեն ծանոթ պիտի լինեն. նա դրանց նմանները կատարել է դասարանում անհատական կամ խմբային աշխատանքի կամ ուսուցանող (ձևավորող) առաջադրանքներ կատարելիս:

Թեստի *հուսալիությունը* կամ *արժանահավատությունը* ստուգման և գնահատման հաստատուն և համարժեք լինելն է, այսինքն՝ արդյունքները գրեթե նույնն են ստացվում, եթե միևնույն խմբին տարբեր օրերի հանձնարարվում են նմանօրինակ թեստեր: Բացի

դրանից՝ թեստը հուսալի է, եթե գնահատման միևնույն չափանիշները կիրառելու դեպքում աշակերտներից յուրաքանչյուրը նույն մակարդակի առաջադրանքի կատարման արդյունքում կունենա համարժեք կամ գրեթե նույն միավորները:

Թեստի անաչառությունը դրսևորվում է այն դեպքում, երբ թեստավորման արդյունքները գնահատողի անձով պայմանավորված չեն:

4.3 Թեստերի բովանդակությունը

Գրեթե բոլոր թեստերում կիրառվում են վարժությունների և առաջադրանքների հետևյալ տեսակները՝

1. Բազմակի ընտրությամբ հարցեր. 3, 4 կամ 5 տարբերակ, որից մեկն է ճիշտ
2. Համապատասխանեցման առաջադրանքներ
3. Բաց թողնվածը լրացնելու առաջադրանքներ
4. Կարճ պատասխան պահանջող հարցադրումներ
5. Ծավալուն պատասխան և ստեղծագործական մոտեցում պահանջող հարցադրումներ

Փորձենք Բենջամին Բլումի դասակարգումից ելնելով՝ առաջադրանքների այս տեսակները բնութագրել:

Առաջին չորս տեսակները հիմնականում ստուգում են գիտելիքի կամ տեղեկատվության մտապահումը, դրանց *ընկալումը* և *կիրառումը*: Սրանք իրենց բնույթով ապահովում են գնահատման անաչառությունը, հետևաբար առավել հուսալի են: Այսօրինակ առաջադրանքներ կազմելը դժվար է, բայց արդյունքները ստուգելը և ամփոփելն է դյուրին:

Համապատասխանեցման և բաց թողնվածը լրացնելու առաջադրանքների մասին ևս նույնը կարելի է ասել: Այսպիսի առաջադրանքներն ունեն որոշակի պատասխան, հետևաբար նաև որոշակի գնահատական:

Որքան առաջ ենք շարժվում Բլումի աստիճանակարգով, այնքան բարդանում է անաչառ գնահատումը: Ստեղծագործական բնույթի ծավալուն պատասխան պահանջող առաջադրանքները մտածողության բարձր մակարդակ են նշում, հետևաբար գնահատման անաչառությունը աստիճանաբար նվազում է, քանի որ ստեղծագործական աշխատանքն ու

երևակայության դրսևորումը գնահատելը հեշտ գործ չէ: Այս դեպքում գնահատումը պիտի իրականացնել հատուկ սանդղակով (ռուբրիկ) և զգուշանալ աչառու վերաբերմունքից:

Վերջին տեսակի առաջադրանքները թեստի մեջ ընդգրկելը բավական դժվար գործ է: Այդ պատճառով էլ ուսումնական գործընթացում կարելի է դրանք տալ առանձին հարցադրումների և առաջադրանքների ձևով:

4.4 Թեստային առաջադրանքների տեսակները

Բազմակի ընտրությամբ առաջադրանքներ

1. Մեկ ճիշտ պատասխան երկու տարբերակից: Թեստային այսպիսի առաջադրանքներում պատասխանի տարբերակները երկուսն են. դրանք հաստատական կամ ժխտական արտահայտություններ են կամ էլ որոշակի բառեր են, որոնցից մեկը ճիշտ պատասխանն է, մյուսը՝ սխալ: Հարցվողը պիտի գտնի ճիշտ պատասխանը և համապատասխան թվահամարը շրջանակի մեջ վերցնի:

Թեստ կազմողը պիտի աշխատի առաջադրանքը ձևակերպել դրական և հաստատական բնույթի արտահայտությամբ:

2. Պատասխանները դարձյալ երկուսն են, բայց դրանք կազմված են ոչ թե մեկ բառից կամ արտահայտությունից, այլ երկու և ավելի: Այս դեպքում շարք է գոյանում, բառերը միանում են ***և*** շաղկապով: Առաջին տողի վերջին բառը կարող է կրկնվել նաև հաջորդ տողի սկզբում:
3. Մեկ ճիշտ պատասխան երեք տարբերակից: Պատասխանների տարբերակները ավելանում են ևս մեկ շարքով: Պատասխաններից մեկը բացահայտ սխալ է, մեկը ճիշտն է, իսկ մյուսը, որը և շփոթություն է առաջացնում, ճշմարտանման է:
4. Իմպլիկացիա կամ եթե, ...ապա-ի զուգորդումով կազմված առաջադրանքներ£ Իմպլիկացիան տրամաբանության մեջ ընդունված եզր է, իսկ լեզվական առումով ձևավորվում է եթե...., ապա շաղկապների զուգորդումով:
5. Բաց թողնվածը լրացնելու առաջադրանքներ: Պատասխանը տրվում է մեկ բառով կամ բառակապակցությամբ: Այսպիսի առաջադրանքների դեպքում ևս

պատասխանները տրված են, հարցվողը պիտի ընտրի համապատասխան բառը կամ բառակապակցությունը և լրացնի բաց թողնված տեղում:

Կարճ պատասխան պահանջող հարցադրումներ կամ առաջադրանքներ

Սրանք առաջադրանքներ են, որոնց պատասխանը պատրաստի չի տրվում. սովորողը ինքը պիտի պատասխանի այդ հարցադրումներին, հանդես բերի գիտելիքի կիրառում, ինչպես նաև ինքնուրույնություն և ստեղծագործական մոտեցումէ Սակայն այսօրինակ առաջադրանքների պատասխանները ևս ծավալուն չեն, դրանք տատանվում են 1-ց մինչև 5 բառի սահմանը:

Ընդարձակ պատասխան պահանջող հարցադրումներ կամ առաջադրանքներ

Ընդարձակ պատասխան տրվում է այնպիսի հարցադրումներին կամ առաջադրանքներին, որոնք նախատեսված են սովորողի տրամաբանության, վերլուծելու, համադրելու, դատողություններ անելու, որոշակի եզրահանգման գալու կարողությունների, խոսքի զարգացածության մակարդակի բացահայտման համար:

Եզրակացություն

Գնահատումը կիրառվում է թե՛ ուսուցչի, թե՛ սովորողի համար ընդունելի ձևերով և հնարներով: Ուսուցման գործընթացում գնահատման օբյեկտը սովորողի գործունեությունն է, որն ուղղված է սովորողի ուսումնառության նպատակի իրագործմանը:

Գնահատման առանձնահատկությունն այն է, որ գնահատման ձևերն ու հնարները կիրառվում են յուրաքանչյուր դասին:

Դասի հիմքը ուսուցման նպատակն է. և՛ ուսուցչի և՛ սովորողի ողջ գործունեությունը պետք է ուղղված լինի այդ նպատակի իրագործմանը: Նպատակով են պայմանավորվում դասի ընթացքը, մեթոդների, միջոցների ու գնահատման ընտրությունը:

Սովորողի գործուն ընդգրկվածությունը ենթադրում է ուսուցման նպատակների և արդյունքների ընկալում, սովորողների կողմից գնահատման չափանիշների ընկալում, ուսուցչի կողմից համապատասխան հնարների կիրառում:

Դասի նպատակի ընկալումը թույլ է տալիս սովորողին դառնալ գործընթացի կազմակերպման գործուն մասնակիցը: Վերջնարդյունքները ևս պետք է հասկանալի լինեն սովորողներին՝ նրանց դարձնելով գնահատման չափանիշների մշակման մասնակից: Նպատակներն ու ակնկալվող արդյունքները պետք է ակնառու ներկայացված լինեն (գրատախտակին, պաստառին, էկրանին և այլն), որպեսզի ուսուցիչն ու սովորողները հնարավորություն ունենան անդրադառնալու դրանց և ստուգելու իրենց ձեռքբերումները:

Այսպիսով, գնահատումը ուսուցչի և սովորողների համատեղ հետադարձ կապի անընդհատությունն է՝ երկկողմ գործունեության ճշգրտման, ուսուցման գործընթացի բարելավման և արդյունավետության բարձրացման նպատակով: Հետադարձ կապը ուսուցչին հնարավորություն է տալիս պատկերացնելու, թե ինչպես է ընթանում ուսուցման գործընթացը, տեղեկատվություն է տրամադրում սովորողների ձեռքբերումների և դժվարությունների մասին:

Գրականության ցանկ

1. Խոսքի մշակույթ: Դասագիրք բուհերի հումանիտար և բնագիտական ֆակուլտետների ուսանողների համար: Երևան, Զանգակ, 2019
2. Հովհաննիսյան Սմբատ Հայոց պատմություն: Մեթոդական ուղեցույց: 7-րդ դասարան / Ս. Հովհաննիսյան.- Եր.: «Մասնակցային դպրոց» ԿՀ, 2023.
3. https://lib.armedu.am/files/resource/files/2022-07-11/2b2703c1568910a9c680b2ab7a6e30a5.pdf
4. https://www.arlis.am/documentview.aspx?docid=149788